Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ԲԱՐԻ՞ Է ՍՈՒՐԻԿԸ

ՄԱՆԿԱԿԱՆ ՊԻԷՍ 2 ԳՈՐԾՈՂՈՒԹԵԱՄԲ

Ցիկ. Վերգ. Դադեանի

ԳԻՆՆ Է 15 ԿՈՊԵԿ

891.99ս
Ղ-- 12

ԹԻՖԼԻՍ
ԷԼԵՔՏՐԱՅԱՐԺ ՏՊԱՐԱՆ ՕՐ. Ն. ԱՂԱՆԵԱՆԻ ՊՕԼԻՍ 7.
1910

28.03.2013

80+2

36709-62

891.99U Պետրոս
Գ-12 թատրոն և դրամա

Ամ 9-0163 16/III 81

ՊՀ 3. 392 1. 3.000.000

36709-62

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԵՐ

ՄԱՐԻԱՄ մայրը	ՏՕՓԻԿ 12 տար.	Հրանտի ընկերները
ՀՐԱՆՏ 8 տարեկան դորա տղան	ԽԱՉԻԿ 7 տար.	
ՀՈՒՐԻԿ 7 տար. } Հրանտի քոյրերը:	ՍՈՒՐԻԿ 12 տար.	
ԿԱՐԻԿ 6 տար. }	ՄԱՆՈՒԿ 7 տար. Սուրիկենց ծառայի տղան. զոկ է. խօսում է զոկերէն:	

Ի. ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ

Բէմը Հրանտենց սենեակն է։ Ձախ կողմում դրած է մեծ սեղան. աջ անկիւնում փոքրիկ սեղան, վրան գրքեր։ Մարիամը նստած մեծ սեղանի մօտ լրագիր է կարդում. նոյն սեղանի մօտ Հուրիկը գիրք է կարդում. Հրանտը գրում է։

ՏԵՍԻԼ Ա.

ՄԱՐԻԱՄ, ՀՐԱՆՏ, ՀՈՒՐԻԿ.

ՄԱՐԻԱՄ. Երեխայք, վաղը դպրոց էք գնալու. արդեօք, դասներդ պատրաստե՞լ էք։

ՀՈՒՐԻԿ. Այո՛, մայրիկ ջան, ես արդէն սովորել եմ։

ՄԱՐ. Ապա կարդա մօտս տեսնեմ ի՞նչպէս ես սովորել։

ՀՈՒՐ. (Վերցնելով գիրքը մօտենում է մօրը եւ կարդում)։ Կու-կու լի կու, պստիկ մստիկ, կարմիր կատար, արի՛ արի՛, կուտիկ տար։

ՄԱՐ. Ա՛յ ապրես, շատ լաւ ես պատրաստել։ Իսկ դու, Հրանտիկ, դեռ չՓս վերջացրել։

ՀՐԱՆՏ. Էս բոպէիս մայրիկ, այ մի խօսք է մնացել գրելու։ (վերջացնելով) ահա, վերջացրի մայրիկ։ (վերցնում է տետրակը եւ մօտենում մօրը)։

ՄԱՐ. (Վերցնելով տետրակը աչքի է անցկացնում գրածը) այ, այ, այ, Հրանտ, մի՞թէ կարելի է այսպէս սխալներով գրել։ Տես Հրանտիկ (ցոյց տալով գրածի վրայ), դու գրել ես «լավ» և փոխանակ վերջը փոքր «ւ» գրելու, մեծ «վ» ես գրել. նոյնպէս և «տարաւ» բառի վերջում փոքր «ւ» պէտք է գրել։

ՀՐԱՆՏ. Ախար մայրիկ ջան գիտեմ է, բայց փոքր «ւ»-ն ինձ դուր չի գալիս, կարծես «լ»-ի ճուտ լինի. էտ ինչէ, որ ես գրեմ է։

ՄԱՐ. Բանը դուր գալու, կամ չգալու մէջ չէ. պէտք է կանոնաւոր գրել, այնպէս՝ որ ուրիշը քեզ հասկանայ։ Վերցրու և ուղղիր. (վերկենալով) այժմ մի փոքր խաղացէք։ Գնամ Կարիկին էլ ուղարկեմ։ (Գնում է)։

ՏԵՍԻԼ Բ.

ՀՐԱՆՏ, ՀՈՒՐԻԿ.

ՀՐԱՆՏ. (Ուղղում է տետրակի միջի սխալները, ապա ծալում եւ դնում գրքերի հետ)։

ՏԵՍԻԼ Գ.

ՀՐԱՆՏ, ՀՈՒՐԻԿ. ԿԱՐԻԿ.

ԿԱՐ. (Ուրախ վազելով ներս)։ Հրանտիկ, Հուրիկ, վերջացրի՞ք դասերդ։ Դէ եկէք խաղանք։

ՀՈՒՐԻԿ. Վերջացրինք։ Ի՞նչ խաղանք։

ՀՐԱՆՏ. Եկէք կարտից անակներ շինենք։

ՀՈՒՐ.
ԿԱՐ. } Եկէք, եկէք։

ՀՐԱՆՏ. (Բերում է մի կալօղ կարտ սեղանի վրայից. բաժանում՝ իրենց մէջ։ Բոլորը նստում են մեծ սեղանի շուրջը եւ սկսում են շինել տնակներ, միաժամանակ երգով միասին երգելով «Ս՛ի վազիր այդչափ արագ իմ սիրունիկ նապաստակ»... Ամենից արագ Հրանտն է շինում տնակ։ Կարիկը որքան չարչարւում է չի կարողանում։ Հրանտը արդէն վերջացնելով) Կեցցէ, ուռռա (ձեռքերը իրար խփելով) արդէն տնակս պատրաստ է։

ԿԱՐԻԿ. (Նեղացած տոնով) Հա՜, բա՛, չեմ ուզում, ինչո՞ւ դու շուտ վերջացրիր։ (Խփում է ձեռքով եւ քանդում Հրանտի տնակը)։

ՀՈՒՐԻԿ. Ա՛յ, վա՛տ Կարիկ. մի՞թէ կարելի է։ Ինչո՞ւ դու գի՞ժ ես, որ քանդում ես ուրիշի շինածը։

ՀՐԱՆՏ. (Ծիծաղելով)։ Ոչինչ, էլի կըշինեմ. խոմ դըժուար չէ։

ԿԱՐ. (Նեղացած) Հա՜, բա՛. չեմ ուզում, Հրանտիկ դու բոլոր լաւ կարտերը վերցրել ես, ինձ բոլոր վատերն ես տուել. դորա համար էլ իմ տնակս չի շինւում։

ՀՐԱՆՏ. Ա՛րի փոխենք։ (Փոխում է իր կարտերը Կարիկի կարտերի հետ։ Կարիկը էլի աշխատում է շինել չի կարողանում։ Հուրիկն էլ արդէս մէկ տնակը շինած աշխատում է նրա վրան մէկ հատ էլ շինել։ Հրանտը նորից շինում է եւ բարձր ուրախ գոռում է խփելով ձեռքերով) այ ջա՛ն, ուռռա՜... մէկն էլ շինեցի։

ԿԱՐ. (Դարձեալ քանդում է Հրանտի տնակը ձեռքով խփելով) Հա՜, բա՛, չեմ ուզում. դու սեղանի ուղիղ տեղն ես նստել, իսկ ինձ խցել ես էս խորդ ու բորդ, ծուռը մուռ տեղերը. դորա համար էլ չեմ կարողանում շինել։ Ա՛րի տեղներս փոխենք.

ՀՐԱՆՏ. Ա՛րի փոխենք (փոխում են տեղերը)։

ՏԵՍԻԼ Դ.

ՀՐԱՆՏ, ՀՈՒՐԻԿ, ԿԱՐԻԿ, ՏՕՓԻԿ, ԽԱՉԻԿ։

(Այդ միջոցին կամացուկ, երեխաների համար անկատելի ներս են մտնում Տօփիկը եւ Խաչիկը, սապօնից փուչիկներ են շինում եւ գցում երեխաների գլխին, մին մէկի՝ մին միւսի։ Երեխաները խիստ զբաղած են, չեն նկատում. նրանք միաժամանակ թէ տնակ են շինում եւ թէ երգում)։

ԿԱՐ. *(Դարձեալ չկարողանալով շինել, ընկացած կարտերը մի կողմ է շպրտում)* Հա՛, բա՛, ես մայրիկին կասեմ...

ՀՈՒՐ. Ի՞նչ կասես։

ԿԱՐ. Կասեմ որ...

ՀՐԱՆՏ. *(վերջացնելով տնակը եւ ընդհատելով Կարիկին)* Այ ջա՛ն. կեցցէ, մէկն էլ շինեցի։

ՏՕՓԻԿ. Այ ջա՛ն, այ ջա՛ն, կեցցես Հրանտիկ։ Այդ ի՞նչ բանի վրայ էք։ *(երեխաները անսպասելի ձայնից վեր են թռնում եւ յետ նայում)*. Կարիկ, ի՞նչու ես քիթդ կախել. եկ, եկ, քեզ մի նոր խաղ սովրացնեմ։ *(Մէկ հատ փուչիկ է շինում)*

ՀՐԱՆՏ.
ՀՈՒՐ.
ԿԱՐ.
} Վա՛յ այդ ի՞նչ է. ո՞վ է սովրեցրել ձեզ։

ԽԱՉԻԿ. Հայրիկս։ Տեսէք ինչպէս եմ անում է *(փուչիկներ է շինում եւ քցում օդի մէջ)*։

ՀՐԱՆՏ.
ՀՈՒՐ.
ԿԱՐ.
} *(Ուրախ ուրախ ծափ տալով)* վա՛յ, վա՛յ, այդ ի՞նչ լաւն է։

ՏՕՓԻԿ. Դէ լաւ, էս թող մնայ մի ուրիշ ժամանակ

կսովրեցնեմ։ Հիմա եկէք մի ուրիշ բան խաղանք (նա եւ Խաչիկը վեր են դնում իրանց ծեռքի բաները)։

ԽԱՉ. Ի՞նչ խաղանք։

ՀՈՒՐԻԿ. Եկէք թագուհի-թագուհի խաղանք։

ԲՈԼՈՐ. Ե՛կէք, եկէք։

ՏՕՓ. *(կանգնեցնում է բոլորին շրջանաձեւ եւ վիճակով ասում է մէկ մէկ ցոյց տալով ամենքին)*։ Առաջինը ո՞վ դուրս գայ նա կլինի թագուհի։

Ի՛զ—ի՛զ—ի՛զդա—ի՛զ—
Բա՛գդա—ի՛զ—
Ես—բագդա՛յի—թո՛ւն—եմ—
Ճի՛գ—մարանի—հարսն—եմ—
Ճի՛գը—ընկա՛ւ—ճրընգաց—
Սարեր—ձորեր—զրընգաց։

(Վիճակը ընկնում է Հուրիկին, որը նստում է սենեակի աջ կողմում, միւսները գնում են ձախ անկիւնում ծածուկ խորհրդակցում. Հուրիկը սպասելով նրանց, կամաց, քթի տակ երգում է «սիրուն թիթեռ ինձ ասա, թէ ինչով ես դու ապրում»... երեխաները այդ միջոցին ուրախ վազելով գալիս են Հուրիկի մօտ)։

ԵՐԵԽԱՅՔԸ. Բարև թագուհի։

ՀՈՒՐԻԿ. Բարէ՛ զաւակներս, ո՞րտեղ էիք։

ԵՐԵԽԱՅՔ. Ննջարանում։

ՀՈՒՐ. Ի՞նչ էիք անում։

ԵՐԵԽԱՅՔ. *(առանց խօսելու բոլորը չոգում են, ձեռքերի ափերը իրար տալիս)*։

ՀՈՒՐԻԿ. *(արագ)* Աղօթում էիք։

ԵՐԵԽԱՅՔԸ. *(Շտապ վեր են կենում ու վազում. Հուրիկը հետեւում է եւ բռնում Խաչիկին)*։ Հիմա Խաչիկն է, Խաչիկը։ *(Դրսեւից այդ միջոցին լսւում է երգի ձայն)*։ Ահա հասաւ նոր տարին, հեռը բերաւ»...

ՀՐԱՆՏ. Ա՛յ ջա՛ն... կեցցէ՛, կեցցէ՛ Սուրիկը։

ԲՈԼՈՐԸ. (ծափահարելով). Կ՚ցցէ։

ՀՐԱՆՏ. (մտենալով լուսամուտին)։ Սուրիկ, Սուրիկ, եկ միասին խաղանք։ Տօփիկը և Խաչիկն էլ են այստեղ։

ՏԵՍԻԼ Ե.

ՆՈՅՆՔ ԵՒ ՍՈՒՐԻԿ

ՍՈՒՐԻԿ (մտնում է ժպտալով, ձեռքերը թանաքոտ, ըլուզի թեւը պատռած)։ Պահ հ՚, այս ինչ լաւ խաղալու խումբ է։

ՏՕՓ. Այդ ի՞նչ է, ի՞նչու ես այդպէս թանաքոտ։

ՍՈՒՐ. Է՚հ, այսօր այնքան դաս եմ գրել, որ ձեռքերումս հալ չի մնացել։

ՀՐԱՆՏ. Բաս թեզ ինչու ես պատռել։

ՍՈՒՐ. (լուրջ)։ Մէկ անպիտան շուն յանկարծ յարձակուեց փողոցով անցնող մի խեղճ աղքատի վրայ ու քիչ մնաց, որ կծի։ Իմ մեղքս եկաւ. ընկայ մէջները, ազատեցի աղքատին, բայց շունը իմ շորերս պատռեց. (առանձին)։ Ընկոյզ գողանալուց պատռուեց, ի՞նչ շունն, ի՞նչ բանն։

ՀՈՒՐ. Ի՞նչ բարի ես Սուրիկ։

ՍՈՒՐ. (շատ լուրջ)։ Բաւական չէ, որ ես բարի եմ, դուք բոլորդ էլ պէտք է աշխատէք բարի լինել։ Տեսէք վաղը տօնածառ կայ, բայց ես ուզում եմ չգնալ և իմ փողը պէտք է տամ աղքատ երեխաներին, որ նրանք գնան ուրախանան։ Բայց այդ թողնենք։ Այդ ի՞նչ էիք խաղում։

ՀՐԱՆՏ. Թագուհի—Թագուհի։

ՍՈՒՐ. Է՚հ, դա լաւ չէ։ Եկէք հարց ու պատասխան խաղանք։ Ես հարցնեմ՝ Տօփիկը թող պատասխանի (ղիմելով Հուրիկին)։ Հուրիկ, այբուբէնից մի տառ ասա։

ՀՈՒՐԻԿ «գ»։

ՍՈՒՐ. Տօփիկ «գ»-ով ո՞ւր կերթաս։

ՏՕՓ. Գանձակ։

ՍՈՒՐ. Որտեղից կգաս։

ՏՕՓ. Գորիսից։

ՍՈՒՐ. Ի՞նչ կբերես։

ՏՕՓ. Գարի։

ՍՈՒՐ. Ինչի՞ վրայ բարձած։

ՏՕՓ. Գոմէշի։

ՍՈՒՐ. Ո՞ւմ կտեսնես ճանապարհին։

ՏՕՓ. Գուրգէնին։

ՍՈՒՐ. Որտեղի՞ցը կբռնես։

ՏՕՓ. Գլխիցը։

ՍՈՒՐ. Որտեղից կբհամբուրես։

ՏՕՓ. Գանգից։

ՍՈՒՐ. Է՚հ դա չեղաւ. լաւ դու ի՞նչ ասացիր։

ՏՕՓ. Գողը գողից գողացաւ, Աստուած վերից զարմացաւ։

ՍՈՒՐ. Իսկ նա ի՞նչ ասաց։

ՏՕՓ. Ասաց՝ «Գիժը գնաց հարսանիք ասաց «այստեղ լաւ է քանց մեր տունը»։

(Այս ամբողջ ժամանակ միւս երեխաները երբեմն երբեմն ծիծաղում են Տօփիկի պատասխանների վրայ, իսկ Հրանտիկը երբեմն երբեմն «կ՚ցցէ» է ասում եւ ծափ տալիս։ Այդ միջոցին դրսեւից լսում է ձայն. «Սուրիկ, Սուրիկ շուտ տուն արի ճաշում ենք»)։

ՍՈՒՐ. Մայրիկս կանչում է, գնամ ճաշեմ էլի կըգամ (դուրս է գնում)։

ՏԵՍԻԼ Զ.

ԲՈԼՈՐԸ, ԱՌԱՆՑ ՍՈՒՐԻԿԻ.

ՏՕՓ. (Սուրիկի յետեւից խէթ խէթ նայելով)։ Որ չըգաս, աւելի լաւ կանես։

ՀՈՒՐԻԿ. Ի՞նչու Տօփիկ, Սուրիկը շատ լաւ տղայ է։ Այնպէս աշխատասէր է։

ՀՐԱՆՏ. Այնպէս ճշմարտախօս։

ԿԱՐԻԿ. Այնպէս բարի է։ (Բոլորը արտայայտում են հաւատացած)։

ԽԱՉ. Շատ լաւ տղայ է Սուրիկը։ Տօփիկ, ինչու ես այդպէս ասում։

ՏՕՓ. Դուք բոլորդ հիացած էք Սուրիկով, բայց ես ընդհակառակը։ Ինձ թւում է, թէ նա ոչ աշխատասէր է, ոչ ճշմարտախօս և ոչ էլ բարի։

ԲՈՂՈՐ. Սխալ ինչու ես այդպէս ասում է։

ՏՕՓ. Ախար ես նրա դասընկերն եմ և չեմ տեսել որ մէկ օր նա դասերը պատրաստած գայ դպրոց. միշտ ծուլութեան համար պատժւում է։ Իսկ չէ՞ որ գիտէք, որ մէկը եթէ ծոյլ է, նա չի կարող լինել ոչ ճշմարտախօս և ոչ էլ բարի։

ԲՈՂՈՐ. Անկարելի է, անկարելի։ Շատ լաւ տղայ է Սուրիկը։

ՏՕՓ. Եթէ այդպէս է, եկէք նրան փորձենք և իսկականը իմանանք։ Եթէ նա լաւ տղայ դուրս եկաւ, ես վաղը չեմ գնայ տօնածառ, իսկ եթէ իմ ասածը դուրս եկաւ, դուք բոլորդ կպատժւէք և կնստէք տանը։ Այո՛, համաձայն էք։

ԲՈՂՈՐ. Այո՛, այո՛։

ՀՐԱՆՏ. Բայց ինչպէս փորձենք։

ՏՕՓ. (Մատը ճակատին դնելով մի փոքր մտածելուց յետոյ) Գտայ։ Այ ասեմ։ Ես կը հագնեմ հարուստ պարոնի շորեր, կգնամ Սուրիկի մօտ իբր թէ գործով և դուրս գալուց մի հինգ բուբլիանոց վայր կձգեմ, իբր թէ չիմանալով և դռան ճեղքից կնայեմ, տեսնենք եթէ նա ճշմարտախօս է, ինչ կանի։

ԲՈՂՈՐ. Այո՛, այո՛, դա շատ լաւ է։

ՀՐԱՆՏ. Կեցցէ Տօփիկը, կեցցէ։

ՏՕՓ. Իսկ որպէսզի իմանանք թէ դէպիաղքատները որքան բարի է, թող Հրանտը ու Հուրիկը հագնեն աղքատի

շորեր և գնան նրանից ողորմութիւն խնդրեն. տեսնենք եթէ նա բարի է, ինչ կանի։

ՀՐԱՆՏ. Այ, դա էլ շատ լաւ էր, կեցցէ։

ԲՈՂՈՐ. (ծափ տալով) Կեցցէ Տօփիկը, կեցցէ։

ՎԱՐԱԳՈՅՐ

II ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ

Բէմը Սուրիկենց սենեակն է։ Ձախ կողմում փոքրիկ սեղան. վրան անկանոն կերպով ցրուած են գրքեր, տետրակներ։ Այդ սեղանի վրայ կայ նաեւ մի գրաֆին ջրով լիքը եւ մի բաժակ։ Աջ կողմում պահարան։ Անկիւնում փոքրիկ սեղան, վրան զրամսօֆոն դրած։

ՏԵՍԻԼ Ա.

ՍՈՒՐԻԿ.

ՍՈՒՐ. (գիրքը բաց առաջին) Սովորիր, սովորիր, սովորիր. ախար ինչ սովորեմ է, երբ գլուխս ոչինչ չի մընում։ Ինն էն է, մուրաբա, շաքար—մաքար գողանամ, ուտեմ ու յետոյ քցեմ Մանուկի կամ կատուի վրան, ես մաքուր սուրբ դուրս գամ. սրան նրան շշմեցնեմ իմ սուտը մուտ փչելով։ Բայց ախար ախմախ են է էս մեր ընկերները, որ հաւատում են, թէ ես ճիշտ որ լաւ տղայ եմ, բարի տղայ եմ։ Հա ոնց չէ բարի, մի մենակ ժամանակս պիտի պատահէք է։ (գրքերը մի կողմ շպրտելով) Ա. դէ կորէք է, ձեզնից խոմ փորս չի կշտանալու։ Հա միտս ընկաւ. վաղը տօնածառ է. մի պար գամ տեսնեմ խօմ պարելը չեմ մոռացել։ (ածում է զրամսօֆոնի վրայ եւ պարում։ Եթէ զրամսօֆոն չկայ, կարելի է դաւալի վրայ ածի ու պարի. եթէ այդ էլ չկայ թող բերնով ածի։ Ցանկալի էր գեղեցիկ-լաւ պարող

լինի եւ պարի լեզգինկա)։ Շատ լաւ է. ինձ նման պար եկող չի լինի։ բոլորի բերանը բաց է մնալու վրաս. ով է հարցնում թէ էստեղս (ցոյց տալով գլուխը) դատարկ է, որ միջին մի կոպէկի խելք չկայ։ Տօ գժւել եմ ինչ է. հազիր մայրիկս տանը չի, մի փոքր մուրաբա դէս դէն գողանամ էլի։ Մանուկ, այ Մանուկ։

ՏԵՍԻԼ Բ.

ՍՈՒՐԻԿ ԵՒ ՄԱՆՈՒԿ.

ՄԱՆՈՒԿ. (ներս է մտնում եւ կանգնում դռան մօտ։ Նա ունի հագած շատ երկար եւ մեծ բլուզ. բլուզի թեւերը կախ են ընկած այնպէս, որ ձեռքերը չեն երեւում. գլխին մի մեծ գլխարկ. ընդհ սնրապէս շատ ծիծաղելի տեսքով)։ Ո՞ւնչա աղա, ուՀ՞նչքս նահուում։

ՍՈՒՐ. (ընելով Մանուկի բլզի թեւից) Ա՜ սրան նայէք է. թամամ նուրին է նուրին. խակը։ Տօ Մանուկ սարսաղուել ես, էտ ինչ ես հագել. (բառախաղով ծաղրում է)։ Մանուկ, Մանուկ, մուկ քրցեմ. մկմկալի ըստեղ քրցեմ (ցոյց տալով Մանուկի բերանը)։

ՄԱՆՈՒԿ. (լացի ձայնով)։ Ախր ուՀ՞նչ արիմ է։ Խանումը տվէլա նահալա սկոհի*), իս ալ սկոհոլըմ։

ՍՈՒՐ. Դէ լաւ, լաւ. մի տխրի։ Մանուկ, մայրիկս տանը չի։

ՄԱՆՈՒԿ. Տուն չի, նոհոծա **) բօզար։

ՍՈՒՐ. Դէ որ էդպէս է դու դրսի՞ կանգնիր. հենց որ մայրիկս գայ, կանչիր այսպէս՝ «արև, արև, դուրս արի»։ Հասկացար. դէ գնա։

ՄԱՆՈՒԿ. Հօ. աղիկ. աղիկ իմահալըմ (դուրս է գընում)։

---

*) Հագիր. ո հնչել կակուղ. **) գնացել է։

ՏԵՍԻԼ Գ.

ՍՈՒՐԻԿ.

ՍՈՒՐ. (բաց է անում պահարանը)։ Մի փոքր շաքար վերցնեմ. համա չըկարծէք թէ ես գող եմ հա (բառախաղի է տալիս).

Գող գող գող քրցեմ

Գղգղալի փորս քցեմ։ (պահարանից մի բուռը շաքար է վերցնում դնում գլխարկի մէջ եւ դնում գլխի վրայ այնպէս՝ որ ոչինչ չի նկատւում. ապա էլի մօտենում է պահարանին եւ մի հացի գդալով բան ուտում։ Այս բոլորը կատարում է շատ ճարպիկ եւ այնպէս որ հանդիսականները լաւ տեսնեն)։ Թուռ, թուռ, թուռ, վայ սիրտս խառնեց. այս ինչ էր. կարծեցի թէ մուրաբա է, թուռ, ձէթ է, ձէթ. թուռ, թուռ (դէն է շպրտում գդալը. վերցնում է սեղանի վրայից բաժակը, ջուր ածում, պահարանից մի քանի կտոր շաքար քցում մէջը, ուզում է խառնել, բայց այս ու այն կողմ ընկնելով մաքուր գդալ չգտնելով, սկսում է խառնել մի մեծ մեխով, որը սեղանի վրայ է լինում եւ խառնելով բաժակը յանկարծ կոտրում է ու ջուրը թափւում)։ Վայ կոտրւեց. էհ ոչինչ, անցեալ օրւայ պէս կասեմ մայրիկին որ կատուն պահարանում գողութիւն անելուց, ոտը յանկարծ կոխել է բաժակի մէջ ու տակը պոկւել է կատւի ծանրութիւնից (բառախաղի է տալիս).

Կատու կատու կատ քրցեմ

Կոկոտալի դէն քրցեմ. (բաժակը շինում է եւ դընում պահարանի մէջ այնպէս, որ չնկատւի թէ կոտրւած է։ Դրսից լսւում է Մանուկի ձայնը «արեւ արեւ դուրս արի»)։ Վայ, մայրիկս է. ինչու՞ այսպէս շուտ։ Սենեակում գըլխարկով որ տեսնի կըբարկանայ. (վերցնում է գլխարկը. բոլոր շաքարի կտորտանքը թափւում են յատակի վրայ։ Շփոթւած ուզում է հաւաքել միաժամանակ ասելով) Խա՛չ, մայրիկ ես չեմ, ես չեմ Մանուկն է գողացել... (բայց

այդ միջոցին ներս է մտնում Տօփիկը հարուստ պարոնի շորեր հագած, փոքրիկ բեխերով եւ միրուքով, գլխին ցիլինդր դրած).

ՏԵՍԻԼ Դ.

ՍՈՒՐԻԿ, ՏՕՓԻԿ.

ՏՕՓ. (ձայնը փոխած) Բարև՛ ձեզ, պարոն. ի՞նչպէս էք, որտեղ է ձեր հայրը, ես նրա մօտ գործով եմ եկել։

ՍՈՒՐ. Հայրս տանը չէ, բայց շուտով կըգայ (առաջարկելով ամոռ)։ Համեցէք պարոն, նստեցէք։

ՏՕՓ. (նստելով) Շնորհակալ եմ, դուք շատ քաղաքավարի էք։ Օ՜, այս ինչ շատ գրքեր ունէք, երևում է, որ կարդալ, գրել շատ էք սիրում. այո՞ պարոն։

ՍՈՒՐ. Օ՜, այո՛ պարոն. իմ ամբողջ բաւականութիւնս այս գրքերի մէջն է։ Ես օր ու գիշեր գրում կարդում եմ։

ՏՕՓԻԿ. (ժպտալով)։ Այո՛, այո՛, տեսնում եմ. (վերկենալով)։ Բայց ձեր հայրը ուշացաւ. աւելի լաւ է գնամ, յետոյ կըգամ։ Ցտեսութիւն։

ՍՈՒՐ. Ցտեսութիւն։

(Տօփիկը դուրս է գնում եւ սենեակի մէջ տեղում իրը թէ անգիտակցաբար վայր է ծգում մի հինգ ռուբլիանոց)։

ՏԵՍԻԼ Ե.

ՍՈՒՐԻԿ.

ՍՈՒՐ. (հպարտ, հպարտ խփելով իւր կրծքին) Ա՛յ, էսպէս տղայ է։ Էս պարոն չելածին էլ զարմացրի իմ փչելով։ Ա՛յ, հիմա կերթայ հօրս կըտեսնի ու կը գովայ, կը գովայ ինձ։ Աֆֆարիմ Սուրէն, քո թայը դեռ չի ծնուել։ (Այս ասելով կռանում է որ շաքարի միւս կտորտանքն էլ հաւաքի եւ յանկարծ տեսնելով փողը, զարմացած եւ ուրախացած վերցնում է)։ Վա՛, այս ի՞նչ է։ Այդ դմբո պարոնը երևի շշմած վայր է ձգել։ Է՜, ի՞նչ. ես էլի իրան խում յետ աւողը չեմ, էս գնա՞ց։ Կըտանեմ մի բօլ կամֆէտ կառնեմ, կուտեմ էտ պարոնի կեանքն էլ կօրհնեմ։ Էս շատ լաւ բան եղաւ։ (Բառախաղեր է կազմում եւ թռվռում)։

Փող, փող, էս ջէբս,
Քաղցր կամֆէտ էս փորս։ (Համապատասխան տեղերը ցոյց տալով)։
Հէքեաթ, հէքեաթ էս պարկս,
Ղաշխա քուռակ էս տակս,
Թազա հարսը էս թարքս,
Գնամ,
Էլնեմ,
Փորս
Լցնեմ։

(Նայելով փողին)
Փող, փող, փող քըցեմ
Փղփղալի դէն քըցեմ։ (Շտապով փողը դնում է զըրպանը։ Դրսեւից ձայն՝ «Արեւ արեւ դուրս արի») Վա՛յ մայրիկս է։ (Նստում է գիրքը առաջին բաց անում, իրը թէ կարդում է)։

ՏԵՍԻԼ Զ.

ՍՈՒՐԻԿ, ՀՐԱՆՏ, ՀՈՒՐԻԿ.

(Դիմացի դռնից վախվխելով ներս են մտնում Հրանտը եւ Հուրիկը ցնցոտիների մէջ փաթաթուած, շատ աղքատ կերպով։ Մէկը աչքերը խփած կոյր է ձեւանում. խօսում են ձայները փոխած)։

ՀՐԱՆՏ. Ա՛ղա ջան, մի ողորմութիւն արէք. Աստուած ձեզ սաղ ջան տայ։

ՀՈՒՐԻԿ. Աստուած ձեր մէկը հազար անի, ա՛ղա ջան մի ողորմութիւն տուէք։

ՍՈՒՐ. (լուրջ քայլում է սենեակում, ձեռքերը յետեւին դրած։ Կոպիտ ձայնով) Գնացէք, Ա՛ստուած տայ. ես ձեզ նմանների հետ գլուխ չունեմ։

ՀՐԱՆՏ. Աղա Ջան, անտուն անտէր ենք... մի կոպէկ փող, կամ մի կտոր հաց տուէք։

ՀՈՒՐԻԿ. Աստուած ձեր ումբրը երկար անի, աղա Ջան։

ՍՈՒՐ. Դեռ շատ պիտի խօսէք, անպիտաններ, քընձրոտ-մընձրոտներ. ձեզ ով է թոյլ տուել ներս մտնելու։ Կորէք աչքիցս։ Աւելորդ հաց որ լինի, մեր կատուին կըտամ. փող լինի կանֆէտի կըտամ. ինչու եմ ձեզ նմաններին բան տալիս։

ՀՐԱՆՏ. Աղա Ջան, Աստծու սիրուն, երեք օր է սոված ենք. մի ողորմութիւն տուէք։

ՍՈՒՐԻԿ. (զոռալով)։ Ինչ է, չէ՞ք ուզում կորչել. ծեծ էք ուզում հա. (բարկացած զոռալով)։ Սերոբ, Մանուկ...

ՏԵՍԻԼ Զ.

ԲՈԼՈՐԸ.

(Այդ միջոցին Տօփիկը նոյն պարոնի զգեստով, Կարիկը, Խաչիկը ներս են վազում եւ Հրանտիկի, Հուրիկի հետ միասին ծափ տալով եւ թռվռալով ասում են) Վա՛յ, վա՛յ, չա՛ռ Սուրիկ, ստախօս Սուրիկ... Հօ քեզ փորձեցինք...

ՎԱՐԱԳՈՅՐ

ՀՍՍՌ-Արա ՍՍՐ
36708-62
Е. Х. ВРОХИМОВИЧЪ
ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳՐԱԴԱՐԱՆ
Публичная Библиотека
1922
Мдсниковяна

«Ազգային գրադարան»
NL0398869

80+2

ԼՈՒՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ

ԴԱԴԵԱՆ ԱՄՈՒԱԻՆՆԵՐԻ

Կազմած դասագրքերից

Ընդհանուր պատմութիւն հատ. I Հայոց ծխ. եկ. դպրոց. V բաժ. համար . . . . . 45 կ.

Բնագիտութիւն հատ. I նկարներով Հայոց եկ. ծխ. դպրոց. III բաժ. համար . . . . . 55 »

Բնագիտութիւն հատ. II նկարներով. Հայոց եկ. ծխ. դպրոց. IV բաժ. համար . . . . . 50 »

Պահեստը «ԳՈՒՏՏԵՄԲԵՐԳ» գրախանութում:

Շուտով մամուլին կը յանձնուի՝ եւ միւս հատորները:

Այս գիրքը ստանալու համար դիմել՝ Верх-Акулисы Араму Дадіанъ, Смот. Арм. училищъ.

Գումարով գնողներին, ոչ պակաս քան 50 հատ. 10% դեղջ
» » » 100 » 15% »